





Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
օգոստոսի 14-ի N 837 - Ա որոշման

<u>HEADS OF AGREEMENT</u>	<u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԴԻՌՈՒՅԹՆԵՐ</u>
Between the Government of the Republic of Armenia	<u>Հայաստանի Հանրապետության Կառավարության՝</u>
represented by the Ministry of Energy and Natural Resources	<u>ի դեմս Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝</u>
<u>and</u>	<u>և</u>
Anaklia IEP Holdings Ltd	«Anaklia IEP Holdings» ՍՊԸ-ի միջև
on the Construction and Operation of a Gas Power Plant in the Republic of Armenia	Հայաստանի Հանրապետությունում գազային էլեկտրակայան կառուցելու և շահագործելու մասին
(540 MW) (2 x 270 MW power plant)	(540 ՄՎտ) (2 x 270 ՄՎտ հզորության էլեկտրակայան)
	
	
2014	2014թ.
Yerevan Date: August, 2014	Քաղ. Երևան Ամսաթիվը՝ 2014 թվականի օգոստոս
<u>Heads of Agreement</u>	<u>Համաձայնագրի հիմնադրույթները</u>
This Heads of Agreement (hereinafter referred to as "the HoA") entered into on August, 2014, in Yerevan, Republic of Armenia	Սույն Համաձայնագրի հիմնադրույթները (այսուհետ՝ «ՀՀԴ») կնքվել է 2014 թվականի օգոստոսի.....-ին

	Երևանում, Հայաստանի Հանրապետություն,
(1) The Government of the Republic of Armenia represented by the Ministry of Energy and Natural Resources (hereinafter referred to as “the Ministry”);	1) Հայաստանի Հանրապետության Կառավարության՝ ի դեմս Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ «Նախարարություն»)
AND	ԵՎ
(2) Anaklia IEP Holdings Ltd, represented by Chairman of Board of Directors Mr Teimuraz Karchava (hereinafter referred to as “the Investor”)	«Anaklia IEP Holdings» ՍՊԸ-ի՝ ի դեմս տնօրենների խորհրդի նախագահ Թեյմուրազ Կարչավայի (այսուհետ՝ «Ներդրող»)
BETWEEN:	ՄԻՋԵՎ:
WHEREAS:	ՔԱՆԻ ՈՐ՝
(A) The Ministry has expressed its interest in the construction of Gas Power Plant and infrastructures in the Republic of Armenia for contributing to the energy sustainability and increasing the electrical energy exports.	(Ա) Նախարարությունն իր հետաքրքրությունն է հայտնել Հայաստանի Հանրապետությունում Գազային էլեկտրակայանի և ենթակառուցվածքների կառուցման հարցում՝ էներգետիկ կենսունակությանը նպաստելու և էլեկտրաէներգիայի արտահանման ծավալները մեծացնելու նպատակով:
(B) The Investor has expressed its interest to invest in constructions — to build, own and operate (on the basis of BOO approach) a power plant with a capacity of 540 MW (2x270 MW) and related infrastructures at its own expense.	(Բ) Ներդրողը հետաքրքրություն է հայտնել կատարելու ներդրում շինարարական աշխատանքներում՝ սեփական միջոցների հաշվին 540 ՄՎտ հզորության էլեկտրակայան (2x270ՄՎտ) և հարակից ենթակառուցվածքներ կառուցելու, տնօրինելու և գործարկելու (ԿՏԳ մոտեցման հիման վրա) հարցում:
(C) The Government of the Republic of Armenia welcomes the initiative of the Investor to carry out the above mentioned activities in respect of the proposed projects.	(Գ) Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ողջունում է Ներդրողի նախաձեռնությունը՝ առաջարկվող նախագծերի հետ կապված նշված գործողություններն իրականացնելու հարցում:
TAKING INTO ACCOUNT THE	ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՎԵՐԸ ՆՇՎԱԾԸ՝

<p>AFOREMENTIONED, THE PARTIES HAVE AGREED AS FOLLOWS:</p>	<p>ԿՈՂՄԵՐԸ ՍՈՒՅՆՈՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ.</p>
<p>1. Subject matter of the HoA</p>	<p>1. ՀՀԴ-ի առարկան</p>
<p>The purpose of the HoA is to record the understanding of the Parties relating to the construction and operation of the Gas Power Plant with a capacity of 540 MW(2x270 MW) and infrastructures located in Armenia (hereinafter referred to as the “Projects”).</p>	<p>ՀՀԴ-ի նպատակն է՝ արձանագրել Կողմերի միջև ձեռք բերված համաձայնությունը Հայաստանի Հանրապետության տարածքում 540ՄՎտ հզորության Գազային էլեկտրակայանի և ենթակառուցվածքների (2x270ՄՎտ) կառուցման ու գործարկման շուրջ (այսուհետ՝ «Նախագծեր»):</p>
<p>2. Terms and Conditions of the HoA</p>	<p>2. ՀՀԴ-ի գործողության ժամկետներն ու պայմանները</p>
<p>The HoA shall enter into force on the Effective Date, shall remain in force until the conclusion of the Project Agreement between the Parties which in its turn shall be valid until the completion of the Projects.</p>	<p>ՀՀԴ-ն ուժի մեջ է մտնում այն գործողության մեջ մտնելու ամսաթվից և գործում է մինչև Նախագծի իրականացման մասին համաձայնագրի կնքումը, որն, իր հերթին, գործում է մինչև Նախագծերի ամբողջական կատարումը:</p>
<p>The Projects are planned to be completed not later than within thirty-six (36) months after issuance of the licence by the Public Services Regulatory Commission of the Republic of Armenia, and not later than within 18 (eighteen) months for the first power-generating unit.</p>	<p>Նախագծերի ամբողջական կատարումը նախատեսվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից լիցենզիայի տրամադրման պահից ոչ ուշ քան երեսունվեց (36) ամսվա ընթացքում, ընդ որում ոչ ուշ քան տասնութ (18) ամսվա ընթացքում՝ առաջին էներգաբլոկի համար:</p>
<p>3. Definition of Terms and Abbreviations</p>	<p>3. Հասկացությունները և հապավումները</p>
<p>3.1 For the purposes of the HoA, the concepts mentioned below shall have the following meaning:</p>	<p>3.1 ՀՀԴ-ի նպատակներով՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝</p>
<p>“Applicable Law” shall mean the legislation of the Republic of Armenia.</p>	<p>«Կիրառելի իրավունք» նշանակում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:</p>
<p>“Completion Date” shall mean the date of completion of construction of the Projects and the date of commencement of exploitation of the Projects by the Investor and the associates thereof.</p>	<p>«Կատարման ամսաթիվ» նշանակում է Նախագծերի շինարարական աշխատանքների ամբողջական կատարման ամսաթիվը և Ներդրողի ու նրա գործընկերների կողմից Նախագծերի շահագործման մեկնարկի ամսաթիվը:</p>

<p>“Investor” shall mean the Anaklia IEP Holdings Ltd and the subsidiary company established thereby in the Republic of Armenia, undertaking corporate responsibility upon performance under the present Heads of Agreement.</p>	<p>«Ներդրող» նշանակում է «Anaklia IEP Holdings» ՍՊԸ-ն և դրա կողմից Հայաստանի Հանրապետությունում հիմնադրած դուստր ընկերությունը, որոնք կորպորատիվ պատասխանատվություն են ստանձնում ՀՀԴ ներքո իրականացվող գործողությունների մասով:</p>
<p>“Effective Date” shall mean the date of signature of the HoA by both Parties.</p>	<p>«Գործողության մեջ մտնելու ամսաթիվ» նշանակում է երկու Կողմերի կողմից ՀՀԴ-ի ստորագրման ամսաթիվը:</p>
<p>“Ministry” shall mean the Ministry of Energy and Natural Resources of the Republic of Armenia.</p>	<p>«Նախարարություն» նշանակում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը:</p>
<p>“Feasibility Study” shall mean technical and economic rationale of the implementation of the Project by the Investor.</p>	<p>«Իրագործելիության ուսումնասիրություն» նշանակում է Ներդրողի կողմից Նախագծի իրականացման տեխնիկական ու տնտեսական հիմնավորումը:</p>
<p>“Government” shall mean the Government of the Republic of Armenia.</p>	<p>«Կառավարություն» նշանակում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:</p>
<p>“Heads of Agreement” (HoA) shall mean this Heads of Agreement which has been concluded between the Government and the Investor, and may be amended and supplemented from time to time upon agreement of the Parties.</p>	<p>«Համաձայնագրի հիմնադրույթներ» (ՀՀԴ) նշանակում է Համաձայնագրի հիմնադրույթների վերաբերյալ սույն փաստաթուղթը, որը կնքվել է Կառավարության և Ներդրողի միջև, և որում Կողմերի համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ:</p>
<p>“Terms of Reference” shall mean the Terms of Reference for the Feasibility Study conducted by the Investor in compliance with this Heads of Agreement and agreed with the Ministry.</p>	<p>«Տեխնիկական առաջադրանք» նշանակում է Նախարարության հետ համաձայնեցված և ՀՀԴ-ին համապատասխան՝ Ներդրողի կողմից իրականացված Իրագործելիության ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքը:</p>
<p>3.2 The interpretations given below shall apply under this Heads of Agreement:</p>	<p>3.2 ՀՀԴ-ի շրջանակներում կիրառվում են հետևյալ մեկնաբանությունները՝</p>
<p>“Hereof”, “herein” and “hereunder” and other words of similar meaning shall refer to this document in its entirety rather than to a separate part thereof, where it does not contradict the legislation in force and is applicable to the given</p>	<p>«Որի», «որում» և «որի համաձայն» և նմանատիպ մյուս բառերը վերաբերում են տվյալ կապակցությանն ամբողջությամբ և ոչ դրա մի մասին, եթե դա չի հակասում գործող օրենսդրությանը և կիրառելի է տվյալ</p>

legal relationship;	իրավահարաբերության նկատմամբ :
The Investor, the Government and the Ministry or any other person shall be interpreted so as to include their respective successors, assigns and transfers, in compliance with their respective interests.	Ներդրող, Կառավարություն և Նախարարություն կամ որևէ այլ անձ հասկացությունները մեկնաբանվում են այնպես, որ ներառեն նաև այն սուբյեկտներին, ում իրավահաջորդության կարգով անցնում, պատվիրակվում և փոխանցվում են դրանց իրավասությունները՝ համաձայն իրենց համապատասխան շահերի:
Words importing the singular number include also the plural and vice versa where it does not contradict the legislation in force and is applicable to the given legal relationship.	Եզակի թվով օգտագործված բառերը ներառում են նաև հոգնակին, և հակառակը, եթե դա չի հակասում գործող օրենսդրությանը և կիրառելի է տվյալ իրավահարաբերության նկատմամբ:
Clause headings are inserted only for the ease of reference and shall not be taken into consideration in the course of interpretation of this HoA.	Կետերի վերնագրերը զետեղված են միայն տեքստում որոնումը հեշտացնելու նպատակով և ՀՀԴ-ի մեկնաբանության ժամանակ հաշվի չեն առնվում:
4. Obligations of the Ministry	4. Նախարարության պարտավորությունները
4.1 According to Clause 5 (<i>Obligations of the Investor</i>), the Ministry shall have the following obligations in relation to the Projects:	4.1 Համաձայն 5-րդ կետի (<i>Ներդրողի պարտավորությունները</i>)՝ Նախագծերի հետ կապված Նախարարությունն ունի հետևյալ պարտավորությունները.
(a) Approvals: Within the scope of its competence and in accordance with the legislation of the Republic of Armenia, to assist the Subsidiary Company in receiving all the necessary licences, permits and/or, from time to time, approvals required for the construction, operation (inter alia, inter-connection with the Energy System), ownership and further exploitation of the Projects.	(ա) Հաստատող փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության շրջանակներում կաջակցի դուստր ընկերությանը ստանալու բոլոր անհրաժեշտ լիցենզիաները, թույլտվությունները և (կամ) ժամանակ առ ժամանակ շինարարության, գործարկման (ի թիվս այլ հարցերի՝ էներգահամակարգի հետ փոխկապակցվածություն), տնօրինման և հետագա շահագործման համար անհրաժեշտ հաստատող փաստաթղթերը:
(b) Information and data access: For the purposes of carrying out the Feasibility Study and detailed engineering by the Investor, it shall be obliged to forward to the Investor all available information and copies	(բ) Տեղեկատվությունը և տվյալների մատչելիությունը՝ իր տրամադրության տակ գտնվող՝ Նախագծերին ու համապատասխան ենթակառուցվածքներին առնչվող բոլոր

<p>of reports related to the Projects and respective infrastructures.</p>	<p>տեղեկություններն ու հաշվետվությունների օրինակները փոխանցել Ներդրողին՝ հնարավորություն տալով վերջինիս իրականացնելու Իրագործելիության ուսումնասիրությունն ու կատարելու ինժեներատեխնիկական մանրակրկիտ աշխատանքներ:</p>
<p>(c) Utilities and Infrastructure: to assist in providing all necessary energy system connections (including high voltage cables, with regard to natural gas, water etc.), in compliance with the legislation in force and non-discrimination principle. As regards the power utilities, the Ministry agrees to grant within the scope of the capacity disposed at the given moment the right to non-discriminated use of inter-state transmission lines for the Project sites, without any prejudice to the international agreements of the Republic of Armenia, at a non-discriminatory unified tariff set by the Public Regulator for all energy generators.</p>	<p>(գ) Կոմունալ ծառայությունները և ենթակառուցվածքները՝ կաջակցի, որպեսզի իրականացվի էներգահամակարգերի բոլոր անհրաժեշտ միացումները (այդ թվում՝ բարձր լարման գծերով, բնական գազի, ջրի և այլնի մասով)՝ գործող օրենսդրության համաձայն և ոչ խտրական սկզբունքով : Էներգամատակարարման ծառայությունների մասով՝ Նախարարությունը համաձայնում է, Նախագծի իրականացման համար տրամադրել այդ պահին տնօրինվող թողունակության շրջանակներում միջպետական էներգահաղորդման գծերի օգտագործման ոչ խտրական իրավունք՝ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի կողմից բոլոր էլեկտրագեներատորների համար ոչ խտրական հիմունքներով հաստատված միասնական սակագնով և չհակասելով Հայաստանի Հանրապետության միջազգային համաձայնագրերին:</p>
<p>(d) Land parcel: to provide assistance in identifying a suitable site and land parcel which the Investor finds appropriate for the implementation of the Projects as well as with relevant utilities available for such land at competitive pricing, pursuant to sales agreement or long term lease, as agreed by the Parties.</p>	<p>(դ) Հողատարածքը. աջակցել այնպիսի տեղանք և հողատարածք նախանշելու գործընթացին, որը ներդրողը նպատակահարմար կգտնի Նախագծերի իրականացման համար, ինչպես նաև նշված հողատարածքին հասանելի համապատասխան կոմունալ հարմարություններով և մրցակցային գներով՝ վաճառքի համաձայնագրի կամ երկարաժամկետ վարձակալության հիման վրա, կողմերի միջև համաձայնեցված կարգով:</p>
<p>(e) Natural Gas Guarantees: after the commissioning of the power plant to guarantee annual supply of natural gas in the</p>	<p>(ե) Բնական գազի երաշխավորում. Էլեկտրակայանը շահագործման հանձնելուց հետո տարեկան երաշխավորում է մեկ</p>

<p>amount of one billion cubic meters on the same conditions as those prescribed for the gas supply to the other energy generating plants. Price of natural gas, as of the date of signature, constitutes 230.82 USD (without VAT).</p>	<p>միլիարդ խորանարդ մետր բնական գազի մատակարարումը՝ միննույն պայմաններով, որոնք կիրառվում են էներգիա արտադրող այլ կայաններիդեպքում: Բնական գազի գինը ստորագրման օրվա դրությամբ կազմում է 230.82 ԱՄՆ դոլար (ստանց ԱԱՀ):</p>
<p>(f) Electricity off take: to assist and support the Investor in concluding long-term electricity off-take agreements with relevant local companies or international companies for the purpose of export.</p>	<p>(գ) Էլեկտրաէներգիայի սպառումը. օժանդակել և աջակցել ներդրողին՝ արտահանման նպատակով համապատասխան տեղական կամ միջազգային ընկերությունների հետ էլեկտրաէներգիայի սպառման երկարաժամկետ համաձայնագրեր կնքելու գործընթացում:</p>
<p>(g) Protection of Investment: to protect the investor's investments and interests in accordance with the current legislation of the Republic of Armenia and international regulations.</p>	<p>(ե) Ներդրումների պաշտպանությունը. պաշտպանել ներդրողի կատարած ներդրումները և շահերը՝ Հայաստանի գործող օրենսդրության և միջազգային կանոնակարգերի համաձայն:</p>
<p>(h) Tax exemption:</p> <p>1. The Government of the Republic of Armenia will approve in the manner defined by the legislation of the Republic of Armenia the investment plan of the company, VAT payments for the goods imported within the framework whereof will be deferred in line with the provisions of Article 6¹ of the Law of the Republic of Armenia On Value Added Tax, in force at the moment of import of those goods.</p>	<p>(ը) Հարկազատումը.</p> <p>1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կհաստատի ընկերության ներդրումային ծրագիրը, որի շրջանակներում ներմուծվող ապրանքների մասով ԱԱՀ-ի վճարումները կհետաձգվեն՝ այդ ապրանքների ներմուծման պահին գործող՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6¹ հոդվածի դրույթներին համաձայն:</p>
<p>2. The Government of the Republic of Armenia guarantees that while exporting energy it will apply a zero VAT rate.</p>	<p>2. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը երաշխավորում է, որ էներգիայի արտահանման ժամանակ կիրառելու է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ:</p>
<p>The Ministry shall, within the scope of its competences, exercise all rights and fulfill all obligations provided for by the HoA in compliance with the legislation of the Republic of Armenia.</p>	<p>Նախարարությունը, իր իրավասությունների շրջանակներում, իրականացնում է ՀՀԴ-ով նախատեսված բոլոր իրավունքները և պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:</p>
<p>5. Obligations of the Investor</p>	<p>5. Ներդրողի պարտավորությունները</p>

<p>5.1 The Investor shall, not later than within 30 days following the entry into force of this Heads of Agreement, incorporate its Subsidiary Company under the laws of the Republic of Armenia, which shall assume the obligations and liability of the Investor concerning the performance under the present Heads of Agreement and the completion of the Project.</p> <p>Alienation of the shares of the Subsidiary Company established by the Investor may be carried out with the consent of the Government of the Republic of Armenia and upon approval of the Public Services Regulatory Commission of the Republic of Armenia, in manner defined by the Law of the Republic of Armenia On Energy Production. Alienation of the property required for the performance of the licenced activities of the Subsidiary Company may be carried out upon approval of the Commission, in manner defined by the Law of the Republic of Armenia On Energy Production. To receive a licence, the Investor submits to the Commission financial guarantees defined by the Law of the Republic of Armenia On Energy Production.</p>	<p>5.1 Ոչ ուշ, քան ՀՀԴ-ն ուժի մեջ մտնելուց 30 օր հետո Ներդրողը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, գրանցում է իր դուստր ընկերությունը, որն ստանձնում է Ներդրողի՝ ՀՀԴ ներքո իրականացվելիք գործողությունների և Նախագծի ամբողջական կատարման մասով պարտավորություններն ու պատասխանատվությունը: Ներդրողի կողմից հիմնադրած դուստր ընկերության բաժնետոմսերի օտարումը կարող է իրականացվել ՀՀ կառավարության համաձայնությամբ և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թույլտվությամբ՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:</p> <p>Դուստր ընկերության լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի օտարումը կարող է իրականացվել Հանձնաժողովի թույլտվությամբ՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:</p> <p>Ներդրողը լիցենզիա ստանալու համար Հանձնաժողովին է ներկայացնում «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական երաշխիքներ:</p>
<p>5.2 The Investor delivers at its own expense two set of gas turbine power plant with a capacity of 270 MW</p> <p>5.2.1 The Investor shall submit detailed Feasibility Study not later than within one month following</p>	<p>5.2 Ներդրողը իր հաշվին մատակարարում է գազատուրբինային էլեկտրակայանի երկու լրակազմ՝ 270 ՄՎտ հզորությամբ:</p> <p>5.2.1 Ներդրողն ստանձնում է պարտավորություն՝ ՀՀԴ-ն կնքելուց ոչ ուշ, քան</p>

<p>the conclusion of this HoA and shall take all reasonable measures to complete all the procedures in a timely manner aimed at the commencement of the process of obtaining all permits on the use of land, licences and other permits — notwithstanding the obligations of the Ministry under Clause 4 of this Heads of Agreement — as well as permissions required for construction.</p>	<p>մեկ ամիս հետո ներկայացնելու Իրագործելիության մանրամասն ուսումնասիրություն, և ձեռնարկում է բոլոր ողջամիտ միջոցները՝ ժամանակին կատարելու այն բոլոր ընթացակարգերը, որոնք ուղղված են շինարարության համար անհրաժեշտ թույլտվությունները ձեռք բերելու, ինչպես նաև, անկախ Նախարարության՝ ՀՀԴ-ի 4-րդ կետով նախատեսված պարտավորություններից, հողօգտագործման բոլոր թույլտվությունները, լիցենզիաները և մյուս թույլտվությունները ձեռք բերելու գործընթացը մեկնարկելուն:</p>
<p>5.3 In the course of carrying out detailed engineering, Feasibility study, construction design and construction of the Projects, the Investor shall be obliged to submit to the Ministry regular reports and all relevant documentation attached thereto on a strictly confidential basis.</p>	<p>5.3 Ինժեներական և Իրագործելիության մանրամասն ուսումնասիրություն, շինարարական նախագծում և Նախագծերով նախատեսված շինարարություն իրականացնելիս Ներդրողը Նախարարություն է ներկայացնում պարբերական զեկույցներ և դրանց կից ներկայացվող բոլոր համապատասխան փաստաթղթերը՝ խիստ գաղտնիության սկզբունքով:</p>
<p>5.4 The Investor shall carry out engineering, construction design, construction and other works in full compliance with the HoA, the Project Agreements and the legislation of the Republic of Armenia.</p>	<p>5.4 Ներդրողն ինժեներական, շինարարական նախագծման, շինարարությանն առնչվող և այլ աշխատանքներն իրականացնում է ՀՀԴ-ով, Նախագծի իրականացման մասին համաձայնագրերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրության լիակատար պահպանմամբ:</p>
<p>5.5 The Investor shall be obliged to carry out its activities in full compliance with the current legislation of the Republic of Armenia and shall ensure the observance and control over the observance of the legislation of the Republic of Armenia by the Investor itself and its subsidiary company during the entire period of Project implementation.</p>	<p>5.5 Ներդրողը պարտավորվում է իր գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության լիակատար պահպանմամբ և ապահովել իր և իր դուստր ընկերության կողմից Նախագծի իրականացման ամբողջ ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահպանումն ու դրա նկատմամբ հսկողությունը:</p>
<p>6. Representations and Guarantees</p>	<p>6. Հավաստիքներն ու երաշխիքները</p>
<p>Each Party to the HoA hereby represents and warrants to the other Party that it is duly incorporated under the laws of its place of incorporation and has the corporate power to enter into and perform its obligations under this Heads of</p>	<p>ՀՀԴ-ի յուրաքանչյուր Կողմ սույնով հավաստում է և երաշխավորում մյուս Կողմին, որ սահմանված կարգով գրանցված է իր գրանցման վայրի օրենքներին համապատասխան և օժտված է ՀՀԴ-ն կնքելու և դրա ներքո իր համար</p>

<p>Agreement. Founding documents of the Investor are attached to the HoA.</p>	<p>Նախատեսված պարտավորություններն իրականացնելու համար անհրաժեշտ կորպորատիվ լիազորություններով:</p> <p>Ներդրողի հիմնադիր փաստաթղթերը կցվում են ՀՀԴ-ին:</p>
<p>7. Authorised Representatives</p>	<p>7. Լիազորված ներկայացուցիչները</p>
<p>The Parties shall be represented by competent representatives/signatories entitled to sign this Heads of Agreement. Each Party may, by written notice to the other Party, include additional representatives authorised to represent that Party for all purposes other than signing amendments to this Heads of Agreement. Each Party shall notify the other Party, in writing, of any changes in its authorized representatives.</p>	<p>Կողմերին ներկայացնում են ՀՀԴ-ն ստորագրելու իրավասություն ունեցող լիազոր ներկայացուցիչները/ստորագրողները: Յուրաքանչյուր Կողմ կարող է, մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով, ներգրավել լրացուցիչ ներկայացուցիչներ, որոնք լիազորված են ներկայացնելու տվյալ Կողմը բոլոր հարցերում՝ բացի ՀՀԴ-ում փոփոխություններ կատարելու դեպքերից: Յուրաքանչյուր Կողմ գրավոր ծանուցում է մյուս Կողմին իր լիազորված ներկայացուցիչների մասով ցանկացած փոփոխության մասին:</p>
<p>8. Project Monitoring</p>	<p>8. Ծրագրի դիտանցումը</p>
<p>Both Parties to the HoA shall be entitled to monitor and inform the other Party of compliance with the requirements set forth by the legislation of the Republic of Armenia.</p>	<p>ՀՀԴ-ի երկու Կողմերն իրավասու են իրականացնել դիտանցում և տեղեկացնել մյուս Կողմին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների հետ համապատասխանության մասին:</p>
<p>9. Confidential Information</p>	<p>9. Գաղտնի տեղեկությունները</p>
<p>In the course of execution of the HoA both Parties to the HoA agree to keep in strict confidence the oral or written information, the <i>know-how</i> in respect of the Project, received from the other Party, and to refrain from disclosing such information to third party. Parties to the HoA should also require from their employees to keep such information, documents or <i>know-how</i> in strict confidence and not to disclose such information to third party without written permission by the signatories to this HoA.</p>	<p>ՀՀԴ-ի երկու Կողմերը համաձայնության են գալիս ՀՀԴ-ն կնքելիս խիստ գաղտնի պահել մյուս Կողմից ստացված, Նախագծին առնչվող տեղեկությունները՝ բանավոր, փաստաթղթավորված, «նոտո հաու», և ձեռնպահ մնալ դրանք որևէ երրորդ կողմի փոխանցելուց: ՀՀԴ-ի Կողմերը նաև պահանջում են իրենց աշխատակիցներից խիստ գաղտնի պահել այդպիսի տեղեկությունները, փաստաթղթերը կամ «նոտո հաուս» և զերծ մնալ դրանք որևէ երրորդ կողմի փոխանցելուց՝ առանց ՀՀԴ-ի ստորագրող կողմերի նախնական համաձայնությունն ստանալու:</p>
<p>10. Force Majeure and the consequences</p>	<p>10. Անհաղթահարելի ուժով</p>

thereof	պայմանավորված դեպքերը և դրանց հետևանքները
Circumstances may be regarded as <i>force majeure</i> if it is impossible to avoid them despite all the efforts taken by the Parties, and if the given circumstances have negative effect on timely performance of the mutual obligations of the Parties. The following circumstances shall be regarded as <i>force majeure</i> :	Դեպքերը կարող են համարվել անհաղթահարելի ուժով պայմանավորված, եթե անհնար է դրանցից խուսափել՝ անկախ Կողմերի գործադրած բոլոր ջանքերից և, եթե իրադարձությունները բացասական ազդեցություն են ունենում Կողմերի փոխադարձ պարտավորությունների ժամանակին կատարումն ապահովելու առումով: Անհաղթահարելի ուժով պայմանավորված դեպքեր են համարվում՝
(a) War, civil unrests, terrorist acts, wide scale strikes;	(ա) պատերազմը, քաղաքացիական ընդվզումները, սահաբեկչական գործողությունները, լայնածավալ գործադուլները.
(b) Massive nuclear and chemical contamination;	(բ) զանգվածային միջուկային և քիմիական աղտոտվածությունը.
(c) Natural disasters, such as earthquakes, flooding, storm, land-slides, thunder, epidemic outbreaks;	(գ) բնական աղետները, ինչպես օրինակ՝ երկրաշարժները, ջրհեղեղները, փոթորիկը, սողանքները, ամպրոպը, համաճարակային բռնկումները.
(d) Events beyond any control, which may have an impact on energy system transmission means and may lead to termination of their operation.	(դ) որևէ վերահսկողությունից դուրս գտնվող այն իրադարձությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ էներգահամակարգի հաղորդման միջոցների վրա և հանգեցնել դրանց աշխատանքի կաթվածահար վիճակին:
In case of occurrence of any of the above-mentioned circumstances, the affected Party shall be obliged to immediately notify the other Party, in writing, by presenting the full details of the given circumstance and specifying the measures to be undertaken for overcoming or mitigating the effects of the circumstances, with indication of approximate time periods.	Վերոհիշյալ դեպքերից որևէ մեկի վրա հասնելու պարագայում, տուժած Կողմը պարտավոր է անհապաղ գրավոր տեղեկացնել մյուս Կողմին՝ ներկայացնելով իրադարձության ամբողջական մանրամասները և դրա առանձնահատկությունները, ինչպես նաև նկարագրել այն միջոցները, որոնք Կողմը նախատեսում է ձեռնարկել դեպքի հետևանքները հաղթահարելու կամ մեղմելու համար՝ նշելով համապատասխան ժամկետները:
11. Amendments	11. Փոփոխությունները

<p>The HoA may be amended or supplemented only by written agreement of both Parties.</p>	<p>ՀՀԴ-ում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն երկու Կողմերի գրավոր համաձայնությամբ:</p>
<p>12. Partial Invalidity</p>	<p>12. Մասնակի անվավերությունը</p>
<p>If any term or condition of the HoA shall to any extent be illegal, invalid or non-enforceable, the remainder of the HoA shall not be affected thereby and each other term and condition shall be legal, valid and enforceable to the fullest extent permitted by the legislation of the Republic of Armenia.</p>	<p>Եթե ՀՀԴ-ի գործողության որևէ ժամկետ կամ պայման որևէ չափով լինի անօրինական, անվավեր կամ ոչ կիրառելի, ապա դա որևէ կերպ չի տարածվի ՀՀԴ-ի մնացած հատվածների վրա, և բոլոր մնացած ժամկետներն ու պայմանները կլինեն օրինական, վավեր և կիրառելի՝ այնքանով, որքանով թույլատրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:</p>
<p>13. Applicable Law</p>	<p>13. Կիրառելի իրավունքը</p>
<p>13.1. The HoA shall be regulated by and construed in accordance with the legislation of the Republic of Armenia.</p>	<p>13.1. ՀՀԴ-ն կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և մեկնաբանվում դրանց համաձայն:</p>
<p>13.2. After signature of the HoA any amendments to the legislation of the Republic of Armenia, made within the period of validity of the HoA, should be observed and complied with by the Parties.</p>	<p>13.2. ՀՀԴ-ն կնքելուց հետո՝ դրա գործողության ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում փոփոխություններ կատարելու դեպքում Կողմերը պետք է հետևեն դրանց և գործեն դրանց համապատասխան:</p>
<p>14. Dispute Resolution</p>	<p>14. Վեճերի կարգավորումը</p>
<p>Parties agree that any dispute arising from the HoA, including but not limited to the date of its signature, execution, rescission, deferral and issues related thereto, should be resolved through mutual agreement within 30 (thirty) days from the date of arising of the dispute or after a longer period to be agreed by the Parties.</p>	<p>Կողմերը համաձայնում են, որ ՀՀԴ-ի կամ դրա շրջանակներում ծագած ցանկացած վեճ՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով այն ստորագրելու ամսաթվի, ՀՀԴ-ն կատարելու, լուծելու, գործողությունը հետաձգելու և հարակից հարցերով, կարգավորվում է փոխադարձ համաձայնությամբ՝ այդ վեճի ծագման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում կամ Կողմերի համաձայնությամբ ավելի երկար ժամանակահատվածում:</p>
<p>Any dispute arising from or in connection with the HoA, including any question regarding its existence, validity or termination, shall be</p>	<p>ՀՀԴ-ից ծագող կամ դրա հետ կապված ցանկացած վեճ՝ ներառյալ դրա գոյության, գործողության կամ դադարեցման հետ կապված</p>

referred to and finally resolved by arbitration under the Rules of the London Court of International Arbitration, which Rules constitute a part of this reservation.	հարցերը, հանձնվում են արբիտրաժային քննության և վերջնական լուծում ստանում դրա միջոցով՝ Լոնդոնի միջազգային արբիտրաժի կանոնների համաձայն, ընդ որում՝ այդ կանոնները հղման ուժով սույն վերապահման բաղկացուցիչ մասն են կազմում:
The arbitral tribunal shall be composed of three arbitrators.	Արբիտրաժային տրիբունալը պետք է բաղկացած լինի երեք անդամից:
The seat, or legal place, of arbitration shall be London.	Արբիտրաժի նստավայրը կամ իրավաբանական հասցեն Լոնդոնն է:
The language to be used in the arbitral proceedings shall be English.	Արբիտրաժային վարույթն իրականացվում է անգլերենով:
The applicable law of the HoA shall be the substantive law of the Republic of Armenia.	Պայմանագրի կարգավորող իրավունքը Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքն է:
15. Language of the HoA	15. ՀՀԴ-ի լեզուն
The HoA is done in the English and Armenian languages, both versions being equally valid and binding for both Parties, save that in the event of ambiguity or conflict between the versions, the English version shall always prevail.	ՀՀԴ-ն կազմված է անգլերենով և հայերենով, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար իրավաբանական ուժ և պարտադիր է Կողմերի համար, սակայն երկու տարբերակներում առկա երկիմաստության կամ հակասության դեպքում մշտապես գերակայում է անգլերեն տարբերակը:
16. Notifications	16. Ծանուցումները
All notifications or communications of other nature (hereinafter collectively referred to as “the notification”) shall be made in writing and sent to the Parties through fax, electronic mail or be delivered in person through registered mail upon the requisites indicated below:	Բոլոր ծանուցումները կամ այլ բնույթի հաղորդումները (այսուհետ բոլորը միասին՝ «ծանուցում») պետք է պատրաստվեն գրավոր և ուղարկվեն Կողմերին առձեռն կամ պատվիրված, ֆաքսիմիլային կամ հեռագրային փոստով: Կողմերի փոստային և կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև՝
The Republic of Armenia: Ministry of Energy and Natural Resources:	Հայաստանի Հանրապետություն՝ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն՝
Mailing Address: Government Building 2, Republic Square, Yerevan, Republic of Armenia	Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 2

Website: http://www.minenergy.am	Կայքէջ՝ http://www.minenergy.am
E-mail: minenergy@minenergy.am	Էլ-փոստ՝ minenergy@minenergy.am
The Investor: Anaklia IEP Holdings Ltd	Ներդրող՝ «Anaklia IEP Holdings» ՍՊԸ
Mailing Address: Suite 7, 55, Park Lane, Mayfair, London W1K 1NA, United Kingdom.	Հասցեն՝ Suite 7, 55, Park Lane, Mayfair, London W1K 1NA, United Kingdom
Website: www.britishecopower.com (Affiliate of Investor)	Կայքէջ՝ www.britishecopower.com (Ներդրողի փոխկապակցված անձ)
E-mail: levmga@hotmail.com	Էլ-փոստ՝ levmga@hotmail.com
If the Parties to the HoA change their mailing address, telephone numbers, the other Party should be immediately notified thereon in writing.	Եթե ՀՀԴ-ի Կողմերը փոփոխություններ են կատարում իրենց հասցեի, հեռախոսահամարների մասով, ապա պետք է այդ մասին անհապաղ գրավոր ծանուցեն մյուս Կողմին:
All notifications are enforced and valid upon their receipt by the other Party.	Բոլոր ծանուցումներն ուժի մեջ են մտնում և վավեր են մյուս Կողմի կողմից դրանք ստանալու պահից:
IN WITNESS WHEREOF , the Parties, each acting through their authorised representatives, have caused this Heads of Agreement to be signed in their names and delivered on the ____ day of June, 2014.	Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ Կողմերը, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս իր պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի միջոցով, ստորագրեցին սույն Համաձայնագրի հիմնադրույթները՝ իրենց անունից և հանձնեցին 2014 թվականի հունիսի ---ին:
GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA REPRESENTED BY THE MINISTRY OF ENERGY AND NATURAL RESOURCES:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆՐԵՍ ԵԿՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Represented by: _____ _____	Ի դեմս՝ _____ _____

ANAKLIA IEP HOLDINGS LTD	«ANAKLIA IEP HOLDINGS» ՍՊԸ
Represented by: <hr/> <hr/>	Ի դեմս՝ <hr/> <hr/>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ